Funded by the European Union

erim Equal Rights & Independent Media

DEAP DEMOCRACY IN EASTERN PARTNERSHIP

ngo center

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՏՀՏ անվտանգության աուդիտի, վեբկայքի թարմացման և անվտանգ փաստաթղթաշրջանառության քաղաքականության մշակման փորձագետի համար

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

ՀԿ Կենտրոնը 2025-2026 թվականներին իրականացնում է կազմակերպության ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման ծրագիր, որի հիմնական նպատակն է զարգացնել բազմաֆունկցիոնալ և անվտանգ կազմակերպական համակարգը: Ծրագիրը ներառում է ֆինանսական կայունության գործողությունների պլանավորում և իրականացում, վճարովի ծառայությունների փաթեթների մշակում, ինչպես նաև դրամահավաքային արշավների ստեղծում և առաջխաղացում: Բացի այդ, ծրագիրը նախատեսում է ՀԿ Կենտրոնի թվային և տեղեկատվական անվտանգությունն ամրապնդելու մի շարք գործողություններ: Այս ամբողջ գործընթացը միտված է բարձրացնելու կազմակերպության տեսանելիությունը, հանրային կապերի արդյունավետությունը և ֆինանսական անկախությունը: «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ն սույն աջակցությունը ստանում է «Հավասար իրավունքներ և անկախ մեդիա» (ERIM, ԷՐԻՄ) կազմակերպության կողմից իրականացվող «Ժողովրդավարությունը Արևելյան գործընկերությունում» (DEAP) ծրագրի շրջանակներում՝ քաղաքացիական հասարակության և անկախ մեդիա կազմակերպությունների կարողությունների զարգացման դրամաշնորհի շրջանակներում:

«Ժողովրդավարությունը Արևելյան գործընկերությունում» (DEAP) ծրագիրը Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող և ԷՐԻՄ-ի կողմից իրականացվող 36 ամսյա ծրագիր է, որը մեկնարկել է 2024 թվականի ապրիլին: Ծրագիրը նպատակ ունի Արևելյան գործընկերության երկրներում նպաստել ներառական, դիմակայուն և ժողովրդավարական հասարակությունների ձևավորմանը և զարգացնել քաղաքացիական հասարակության և տեղական կազմակերպությունների կարողությունները՝ աջակցելով հետազոտություններին և քաղաքականության վերլուծությանը, ինչպես նաև կազմակերպելով մշակութային և ցանցային միջոցառումներ:

Այս առաջադրանքով ՀԿ Կենտրոնը նպատակ ունի ապահովել կազմակերպության թվային ենթակառուցվածքի անվտանգ, կայուն և համապատասխան գործունեությունը՝ իրականացնելով՝

- Տեղեկատվության և հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) անվտանգության համապարփակ աուդիտ,
- ՏՀՏ Անվտանգության փաստաթղթերի (protocols) և քաղաքականությունների մշակում/կարգավորում,

- ՀԿ Կենտրոնի www.ngoc.am պաշտոնական կայքի թարմացում և անվտանգության բարձրացում,
- Անվտանգ փաստաթղթաշրջանառության քաղաքականության և ընթացակարգերի մշակում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԱԴՐՈՒՄՆԵՐ (OBJECTIVES)

- Հայտնաբերել և վերացնել ՏՀՏ ենթակառուցվածքում առկա խոցելիությունները:
- Սահմանել և ներդնել կազմակերպության համար կիրառելի անվտանգության քաղաքականություններ:
- Թարմացնելկազմակերպության վեբկայքը (CMS, plugin-ներ, անվտանգության կարգավորումներ, արագագործություն):
- Մշակել փաստաթղթաշրջանառության քաղաքականությունները և ընթացակարգերը (դասակարգում, հասանելիություն, պահպանման ժամկետներ, արխիվացում/ոչնչացում, դերեր ու պատասխանատվություններ):
- Նպաստել թեմայի վերաբերյալ կարողությունների զարգացմանը՝ համապատասխան ուսուցմամբ և ուղեցույցներով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾԱՎԱԼ

1. ՏՀՏ անվտանգության աուդիտ

- Գույքագրում և շրջանակում. IT ակտիվների ցանկի կազմավորում:
- Տեխնիկական գնահատում:
- Վեբկայքի/վեբ-ծառայությունների անվտանգության սկանավորում:
- Ռիսկերի գնահատում և առաջնահերթում:
- Արձանագրությունների և քաղաքականությունների բացերի վերլուծություն:

2. Անվտանգության արձանագրություններ և քաղաքականություններ

- **Կազմակերպական քաղաքականություններ**.
  - Տեղեկատվական անվտանգության ընդհանուր քաղաքականություն
  - Մուտքերի և գաղտնաբառերի քաղաքականություն (MFA, գաղտնաբառերի կառավարում)
  - Մատչելիության վերահսկում (role-based access)
  - Պահուստավորում և վերականգնում (Backup & Recovery)
- **Գործառնական արձանագրություններ/գործընթացներ**՝ թարմացումների կառավարում, խոցելիությունների կառավարում, իրավազորությունների շրջանառություն:

3. Վեբկայքի թարմացում և ամրացում

- CMS-ի և բոլոր լրացումների թարմացում՝ վերջին կայուն տարբերակների,
- HTTPS/HSTS, անվտանգության վերնագրեր,
- Մաքուր/պատշաճ թղթապանակային/ֆայլային իրավունքներ, admin panel-ի սահմանափակումներ (IP allowlist, MFA),

- Արդյունավետություն/արագագործություն,
- Կրկնօրինակի (backup) և վերականգնման փորձարկում (restore test),
- Մոնիթորինգ/զգուշացումներ (uptime, հիմնական լոգեր)։

4. Փաստաթղթաշրջանառության քաղաքականություն և ընթացակարգեր

- **Դասակարգում՝** փաստաթղթերի տիպաբանություն (ներքին/արտաքին, անձնական տվյալներ, ֆինանսական, պայմանագրեր և այլն),
- **Մատչելիություն/հասանելիության՝** իրավունքների մատրիցա, դերի հիման վրա հասանելիություն,
- **Պահպանման ժամկետներ և արխիվացում՝** ըստ դասակարգման,
- **Ոչնչացման կարգ՝** իրավական պահանջներին համապատասխան,
- **Գործիքակազմ՝** անվանման կանոններ, թղթապանակային կառուցվածք (share/cloud), նմուշաձևեր (templates),
- **Դերերի հստակեցում՝** պատասխանատու ստորաբաժանումներ/անձինք։

5. Ուսուցում և փոխանցում

- 1 առցանց սեմինար(մինչև 2 ժամ)՝ աշխատակիցների համար,
- Ուսումնական նյութեր/սահիկներ (PDF/PPT),
- Արձանագրությունների/քաղաքականությունների կիրարկման ցուցումներ,
- Հարցուպատասխանի սեսիա։

ԺԱՄԿԵՏՆԵՐ

Աշխատանքը նախատեսված է իրականացնել 2025թ. նոյեմբերից մինչև 2026թ. փետրվար։

ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Առնվազն 3 տարվա փորձ ՏՀՏ անվտանգության, տեղեկատվական համակարգերի աուդիտի և վեբկայքերի անվտանգության ոլորտում։
- ՏՀՏ անվտանգության ստանդարտների և լավագույն փորձերի իմացություն (ISO/IEC 27001, NIST CSF, OWASP Top 10 և այլն)։
- Վեբկայքերի կառավարման համակարգերի (CMS) հետ աշխատանքի փորձ (օրինակ՝ WordPress, Drupal կամ համարժեք)։
- Հայերեն լեզվով փաստաթղթերի պատրաստման և հաղորդակցման կարողություն։
- Անգլերենի իմացությունը կդիտվի որպես առավելություն։
- Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ աշխատանքի փորձը կդիտվի որպես առավելություն։

ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հետաքրքրված անձինք կարող են տրամադրել իրենց հայտերը հետևյալ փաթեթով՝ մինչև **հոկտեմբերի 16-ը, ժամը 23:59-ն.**

1. Հետաքրքրության նամակ (ներկայացնելով առաջադրանքի կատարման մոտեցումը, նախկին փորձառությունը),
2. Ինքնակենսագրական (CV),
3. Գնային առաջարկ՝ հարկերը ներառյալ,
4. Նախկին նմանատիպ փորձի օրինակներ:

Հայտերի փաթեթն անհրաժեշտ է ուղարկել info@ngoc.am էլ. Փոստի հասցեին:
Նամակի Թեմա տողում նշել «ՏՀՏ մասնագետ»: